



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Գևորգյանը, Գեղամ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, համայնքի ղեկավարի օգնական Արմեն Ստեփանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 27-ի թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 1 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին:
4. Գլաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի վարձատրության չափը որոշելու մասին:
5. Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
7. Գլաձոր համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
8. Գլաձոր համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի 4-րդ եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
9. Գլաձոր համայնքի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցներին 2020 թվականի հունվար ամսին հարկադիր պարապուրդի մեջ համարելու մասին:
10. Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 74-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
11. Գլաձոր համայնքի Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու, հասցեները սահմանելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունները հաստատելու մասին:
12. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Նարեկ Արմենակի Առուստամյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
13. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցույթով վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:
14. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
15. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Գոռ Գնելի Գևորգյանին գույքահարկի գծով արտոնություն տալու մասին:
16. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի բնակիչ Նարեկ Կարապետի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01/